

Զուտ
Քրիստոս
Կեռամբուն



Քլայվ Սթեյիլս Լուիս

Զուտ
Քրիստո
Կենսաբանություն

Թարգմանությունն անգլերենից՝
Հայկազուն քահանա Սահակյանի



Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
2023

C. S. Lewis.

Mere
Christianity



ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ
Ն. Ա. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հրատարակվում է երաշխավորությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի

ՀՏԴ 27

ԳՄԴ 86.37

Լ 888

Լուիս Քլայվ Սթեյվլս
Ջուռ քրիստոնեություն / Քլայվ Սթեյվլս Լուիս; Թարգմանությունն
անգլերենից՝ Հայկազուն քահանա Սահակյանի.- Երևան;
Վաղարշապատ: Newmag: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն,
2023.- 324 էջ:

«Ջուռ քրիստոնեություն» գրքի հիմքում Քլայվ Սթեյվլս Լուիսի ռադիոելույթներն են, որոնք հեռարձակվել են Երկրորդ աշխարհամարտի ընթացքում՝ 1941-1944 թթ.: Հեղինակը պարզ օրինակներով ներկայացրել է քրիստոնեությունը, որ կա մի Աստված, և որ Հիսուս Քրիստոս Նրա Միածին Որդին է, որին Նա ուղարկել է աշխարհը փրկելու: Նա անհրաժեշտաբար քննության է ենթարկում Նաև միշտ արդիական «թշնամուն սիրելու» պատվիրանն ու հստակեցնում քրիստոնեական ըմբռնումը: Ընկերական գրույցի ոճը, որով գրված է գիրքը, մեծապես հեշտացնում և հաճելի է դարձնում ընթերցումը:

ՀՏԴ 27

ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-884-98-1

Քլայվ Սթեյվլս Լուիս «Ջուռ քրիստոնեություն» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ

Mere Christianity by CS Lewis © C. S. Lewis Pte Ltd. 1942, 1943, 1944, 1952

www.cslewis.com

Published by Newmag Publishing House under license from The CS Lewis Company Ltd.

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել The CS Lewis ընկերության հետ կնքած պայմանագրով:

«Հուն» մատենաշարը Newmag հրատարակչության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչության համատեղ նախագիծն է, մատենաշարով լույս տեսնող գրքերը հրատարակվում են համատեղ ջանքով:

6. Քրիստոնեական ամուսնություն	155
7. Ներում	170
8. Մեծագույն մեղքը	179
9. Սեր	190
10. Հոյս	197
11. Հավատ	203
12. Հավատ	211

Գիրք Դ

Անձնավորությունից անդին.

<i>կամ առաջին քայլերը երրորդության վարդապետության մեջ</i>	221
1. Արարում և ծնունդ	223
2. Եռանձնյա Աստված	233
3. Ժամանակ և ժամանակից անդին	241
4. Բարեբեր վարակ	248
5. Համառ անագե գինվորիկները	255
6. Երկու նկատառում	261
7. Եկեք ձևացնենք	266
8. Քրիստոնեությունը հեշտ է, թե՛ դժվար	276
9. Հաշվարկել ծախսերը	284
10. Լավ մարդիկ, թե՛ նոր մարդկություն	291
11. Նոր մարդիկ	305
Թարգմանչի ծանոթագրությունները	317

Բովանդակություն

Առաջաբան 7

Գիրք Ա

Ճիշտն ու սխալը որպես տիեզերքի իմաստի բանալի 23

1. Մարդկային բնության օրենքը 25
2. Որոշ առարկություններ 33
3. Օրենքի իրականությունը 42
4. Ինչ է թաքնված օրենքի հետևում 49
5. Մենք մտահոգվելու պատճառ ունենք 58

Գիրք Բ

Ինչին են հավատում քրիստոնյաները 65

1. Հակասական պատկերացումներ Աստծո մասին 66
2. Ներխուժումը 72
3. Ցնցող այլընտրանք 81
4. Կատարյալ ապաշխարողը 89
5. Գործնական եզրակացությունը 98

Գիրք Գ

Քրիստոնեական վարքագիծ 107

1. Բարոյականության երեք մասերը 108
2. Գլխավոր առաքինությունները 117
3. Հասարակական բարոյականություն 124
4. Բարոյականություն և հոգեվերլուծություն 133
5. Սեռական բարոյականություն 142

Առաջարան

Այս գրքի բովանդակությունը նախ ռադիոհաղորդումների մի ամբողջ շարքի նյութ է ծառայել, ապա հրատարակվել է երեք առանձին մասերով՝ «Ռադիոգրույցներ» (1942), «Քրիստոնեական վարք» (1945) և «Անհատականությունից անդին» (1944)։ Տպագիր տարբերակում որոշ հավելումներ են արել այն ամենին, ինչ ասել են խոսափողի առաջ, սակայն, ընդհանուր առմամբ, տեքստը թողել են անփոփոխ։ Ռադիոյով «գրույցը», կարծում են, չպետք է հնչի որպես բարձրաձայն ընթերցվող գրական ակնարկ, այն պետք է հենց գրույց լինի՝ անկեղծությամբ լի։ Այդ պատճառով էլ իմ գրույցներում ես գործածել եմ բոլոր այն կրճատված և խոսակցական արտահայտությունները, որոնք սովորաբար օգտագործվում են գրույցելիս։ Տպագիր տարբերակում վերարտադրել են այդ կրճատումներն ու խոսակցական դարձվածքները։ Եվ բոլոր այն տեղերը, որտեղ ռադիոգրույցում այս կամ այն բառի կարևորությունն ընդգծել են շեշտելով, տպագիր տարբերակում առանձնացրել են շեղագրով։ Այժմ հակված եմ այն մտքին, որ դա սխալ մոտեցում էր, բանավոր խոսքարվեստի և գրարվեստի անցանկալի խառնուրդ։ Պատմողը պետք է

ճայներանգի փոփոխությանը ընդգծի կամ առանձնացնի որոշակի մասեր, քանի որ գրույցի ժանրն ինքնին պահանջում է դա, իսկ գրողը չպետք է շեղատառն օգտագործի այդ նույն նպատակով: Կարևոր բառերն ընդգծելու համար նա ուրույն, տարբերվող միջոցներ ունի և դրանք պետք է կիրառի:

Այս հրատարակության մեջ բացառել են հապավումները և շեղագրերի փոխարեն վերաձևակերպել են այն նախադասությունները, որոնցում դրանք կային, հուսով են, չխաթարելով այն արդեն ծանոթ և «մտերմիկ» տոնը, որ հատուկ էր ռադիոգրույցներին: Նաև որոշ տեղերում ավելացրել կամ հանել են առանձին մասեր, քանի որ սկզբնական տարբերակը, ինչպես պարզեցի, թյուրըմբռնման առիթ էր տվել. բացի այդ, կարծում են, ինքս էլ սկսել են ավելի լավ հասկանալ գրույցի առարկան, քան հասկանում էի տասը տարի առաջ:

Պետք է նախազգուշացնեն ընթերցողին, որ չեն առաջարկում օգնություն մեկին, որը տատանվում է քրիստոնեական երկու հարանվանությունների միջև: Դուք ինձնից չեք ստանա խորհուրդ, թե որ եկեղեցու հետևորդ պետք է դառնալ՝ անգլիկան^{*}, թե երիցական^{**}, հռոմեակաթոլիկ^{***}, թե մեթոդիս-

* Անգլիկան եկեղեցի - Անգլիայի պետական եկեղեցին է: 1534-ին խորհրդարանի որոշմամբ՝ Հենրիխ 8-րդ թագավորը հայտարարվել է Անգլիկան եկեղեցու առաջնորդ, և եկեղեցին անջատվել է հռոմեակաթոլիկ եկեղեցուց: Մինչև օրս Անգլիկան եկեղեցու գլուխը միապետն է: (Ծանոթագրությունները՝ թարգմանչի: Հեղինակի ծանոթագրությունները հիշատակվում են առանձին):

** Երիցական (Պրեսբիտերական) եկեղեցիներ - 16-րդ դարում Անգլիայում և Շոտլանդիայում բողոքականության կալվինական ճյուղից առանձնացած հարանվանություններ, որոնք եկեղեցու նվիրապետության մեջ ընդունում էին միայն երեցի աստիճանը՝ մերժելով եպիսկոպոսությունը, և ընդդեմ Անգլիկան եկեղեցու պահանջում էին եկեղեցին անջատել պետությունից: Այս եկեղեցիներում չկան սուրբ սեղաններ, սրբապատկերներ, մոմեր և այլ ծիսական պարագաներ: Արարողությունների ընթացքում հնչում է ժամանակակից երաժշտություն:

տական*։ Այս հարցը դիտավորյալ են զանց առել (նույնիսկ վերը բերված ցանկը պարզապես այբբենական հաջորդականությամբ են նշել)։ Ես գաղտնիք չեմ դարձնում սեփական դիրքորոշումս։ Անգլիայի եկեղեցու շատ սովորական շարքային անդամ եմ, ո՛չ չափազանց «բարձր», ո՛չ չափազանց «ցածր»** և ընդհանրապես ո՛չ չափազանց, ինչ էլ այն լինի։ Այս գրքում որևէ մեկին իմ դիրքորոշման կողմը գրավելու փորձեր չեմ անում։

Քրիստոնյա դառնալու պահից սկսած՝ միշտ համարել եմ, որ լավագույն ու, հնարավոր է, միակ ծառայությունը, որ կարող եմ մատուցել իմ անհավատ մերձավորներին, բացատրել և պաշտպանելն է հավատը, որն ընդհանուր է եղել բոլոր ժամանակների գրեթե բոլոր քրիստոնյաների համար։ Այդ կերպ մտածելու համար բազմաթիվ պատճառներ ունեմ։

*** Հռոմեակաթոլիկ կամ Կաթոլիկ եկեղեցի - քրիստոնեության հիմնական ուղղություններից մեկը, որը հետևորդների թվով քրիստոնեության ամենախոշոր ճյուղն է։ Հռոմեակաթոլիկ եկեղեցու հովվապետը Հռոմի Պապն է, որի նստավայրը Վատիկան քաղաքն է։ Ավանդական մյուս եկեղեցիներից տարբերվում է դավանաբանական, վարդապետական, ծիսական, եկեղեցական կառավարման և այլ հարցերով։

* Մեթոդիստական եկեղեցի - բողոքական հարանվանություն, որն անջատվել է Անգլիկան եկեղեցուց։ Այս ուղղության առաջացումը կապում են Աստվածաշնչի մեթոդիկ կամ համակարգված ուսումնասիրման, ինչպես նաև ծեսերի և եկեղեցական այլ կարգերի կատարման համար Օքսֆորդի համալսարանում 1729-ին Ուեյլի եղբայրների հիմնադրած «Սուրբ ակումբի» հետ։

** Բարձր և ցածր եկեղեցիներ - 17-րդ դարի վերջում և 18-րդ դարի սկզբում Անգլիկան եկեղեցու ներսում առաջացած երկու ուղղություն։ Առաջինը կարևորում և պահպանում է եկեղեցական ծիսական զգեստները, եկեղեցական ճարտարապետության և ծիսական արարողությունների ընթացքում միջնադարյան երաժշտության ավանդույթները, իսկ մյուսն ավետարանական ուղղություն է, որը նվազագույնի է հասցնում հոգևորականության, եկեղեցական խորհուրդների և աստվածապաշտության ծիսական մասի դերը եկեղեցական կյանքում։

Նախ, այն հարցերը, որոնք բաժանում են քրիստոնյաներին (տարբեր հարանվանությունների), հաճախ վերաբերում են բարձր աստվածաբանության առանձին խնդիրների կամ նույնիսկ եկեղեցու պատմությանը, և դրանք պետք է թողնել բացառապես մասնագետների քննարկմանը: Դրանք հաղթահարելն իմ ուժերից վեր կլինեն. ավելի շուտ ինքս օգնության կարիք կունենայի, քան կկարողանայի այլոց օգնել:

Երկրորդ, կարծում եմ, պետք է ընդունենք, որ այդ վիճելի հարցերի շուրջ բանավեճերը հազիվ թե կարող են քրիստոնեական համայնք ներգրավել որևէ կողմնակի մեկին: Ինչքան ավելի շատ այդ հարցերի մասին գրենք ու խոսենք, այդքան ավելի մեծ հավանականությամբ նրան հետ կկանգնեցնենք որևէ քրիստոնեական համայնք մուտք գործելուց, քան կգրավենք դեպի մեր կողմը: Մեզ բաժանող տարբերությունները կարող են քննարկվել բացառապես նրանց ներկայությամբ, ովքեր արդեն հավատում են, որ կա մի Աստված, և որ Հիսուս Քրիստոս նրա Միածին Որդին է:

Եվ վերջապես, տպավորություն ունեմ, որ ավելի տաղանդավոր հեղինակներ ավելի շատ զբաղվել են այդ վիճելի հարցերով, քան հանդես են եկել ի պաշտպանություն քրիստոնեության էության կամ «զուտ» քրիստոնեության, ինչպես այն անվանում է Բաքստերը*: Այն ասպարեզը, որտեղ, իմ կարծիքով, կա-

* Richard Baxter, Ռիչարդ Բաքստեր (1615-1691) – անգլիկան աստվածաբան, եկեղեցական առաջնորդ, պոետ, Mere christianity (Ջուս քրիստոնեություն) արտահայտությունեզրն առաջին անգամ կիրառել է իր «Եպիսկոպոսական կառավարության եկեղեցական պատմություն» գրքում: «Ես քրիստոնյա եմ, զուտ քրիստոնյա և ոչ այլ կրոնի հետևորդ, և եկեղեցին, որի անդամ եմ ես, Քրիստոնեական եկեղեցին է... Սակայն եթե որևէ մեկը կամենում է զուտ քրիստոնյաներին կոչել ինչ-որ կուսակցության անունով նրա համար, որ նրանք համախորհուրդ են զուտ քրիստոնեության, հավատարմի և Սուրբ Գրքի շուրջ..., ապա ես այն կուսակցությունից եմ, որը դեմ է ցանկացած կուսակցականության»:

րող էի լավագույնս ծառայել, ամենից շատ դրա կարիքն ուներ: Եվ, բնականաբար, այդ ուղղությամբ էլ գնացի:

Որքան հիշում եմ, իմ շարժառիթները միայն սրանք էին, և ես շատ ուրախ կլինեի, եթե մարդիկ որոշակի վիճելի հարցերի շուրջ իմ լռությունից մտացածին հետևություններ չանեին:

Օրինակ՝ այդ լռությունը չի նշանակում, որ ես սպասողական դիրք եմ գրավել, թեև երբեմն այդպես էլ կա: Քրիստոնյաների մեջ երբեմն ծագում են հարցեր, որոնց պատասխանները, իմ կարծիքով, մենք չունենք: Կան նաև հարցեր, որոնց պատասխանները հնարավոր է՝ երբեք էլ չիմանամ. նույնիսկ եթե դրանք Արքայության մեջ հարցնեմ, հավանաբար (կարծում եմ) կտրվի այնպիսի պատասխան, ինչպիսին տրվեց առավել մեծ մի հարցատուփ* . «Քեզ ի՞նչ հոգ, դու արի՛ իմ հետևից» [Հովհ. 21.20-22]: Այլ հարցեր էլ կան, որոնց դեպքում որոշակի դիրքորոշում ունեմ, սակայն այդ հարցերում ևս լռություն եմ պահպանում, քանզի չեմ գրում շարադրելու համար մի բան, որ կարող էի կոչել «Իմ հավատը», այլ ներկայացնելու համար «զուտ» քրիստոնեությունը, որն այն է, ինչ կա և եղել է իմ ծնունդից դեռ շատ առաջ և անկախ նրանից՝ ինձ դա դուր է գալիս, թե ոչ:

Ումանք անհիմն եզրակացություններ են անում այն փաստից, որ ես երբեք Օրինյալ Կույս Մարիամի մասին ավելին չեմ ասում, քան պարունակված է Քրիստոսի Կուսական Ծննդյան ավետիսի մեջ: Բայց սրա պատճառն ակնհայտ է: Եթե ես մի փոքր ավելին ասեի, դա ինձ անմիջապես կտաներ խիստ վիճելի և հակասական տեսակետների տիրույթ: Մինչդեռ քրիստոնեության մեջ ոչ մի այլ վիճահարույց հարց չի պա-

* Նկատի ունի Պետրոս առաքյալին:

հանջում այնպիսի նրբանկատ մոտեցում, որքան այս մեկը: Հռոմեակաթոլիկ եկեղեցին այս հարցի շուրջ իր տեսակետը պաշտպանում է ոչ միայն սովորական եռանդով, որը հատուկ է կրոնական բոլոր անկեղծ համոզմունքներին, այլև, բնականաբար, առանձնակի ջերմեռանդությամբ, քանի որ դրանում դրսևորվում է այն ասպետական դյուրազգացությունը, որով մարդը պաշտպանում է իր մոր կամ սիրելիի պատիվը, երբ նրան վտանգ է սպառնում: Չափազանց դժվար է այնպես արտահայտել նրանց հետ ունեցածդ տարակարծությունը, որ չերևաս անբարեկիրթ կամ նույնիսկ հերետիկոս: Եվ, հակառակը, բողոքականների հակադիր համոզմունքներն այս հարցում պայմանավորված են այնպիսի զգացումներով, որոնց արմատները հասնում են միաստվածության ակունքներին: Արմատական բողոքականների համար դա նշանակում է, որ վտանգված է Արարչի և արարածի (որքան էլ, որ սուրբ լինի) տարբերությունը, ինչը նշանակում է, որ բազմաստվածությունը կրկին գլուխ է բարձրացնում: Հետևաբար բարդ է այնպես արտահայտել նրանց հետ ունեցածդ տարակարծությունը, որ հերետիկոսից ավելի վատ մի բան՝ հեթանոս չերևաս: Եթե կա մի թեմա, որ կարող է կործանել քրիստոնեության էության մասին մի գիրք, եթե կա մի թեմա, որ կատարելապես անօգուտ է դարձնում այդ գրքի ընթերցանությունը նրանց համար, ովքեր դեռ չեն հավատում, որ Կույսի Որդին Աստված է, վստահաբար սա հենց այդ թեման է: Որքան էլ տարօրինակ է, վիճելի կետերի շուրջ իմ լռությունից դուք չեք կարող անգամ եզրակացնել՝ ես դրանք կարևոր թե անկարևոր եմ համարում. փաստն այն է, որ դրանց կարևորության հարցն ինքնին վիճելի կետերից մեկն է:

Քրիստոնյաների անհամաձայնության առարկաներից մեկն էլ հենց այն է, թե կարևոր են իրենց տարածայնությունները: Երբ տարբեր հարանվանություններից երկու քրիստոնյա սկսում են բանավիճել, սովորաբար երկար ժամանակ չի անցնում, երբ նրանցից մեկը հարցնում է, թե այսինչ կամ այնինչ կետն «իսկապե՞ս կարևոր է», և մյուսն արձագանքում է՝ «ինչպե՞ս թե կարևոր է, դա չափազանց էական է»:

Այս ամենն ասվեց պարզապես հստակեցնելու համար, թե ինչ տեսակ գիրք էի ես փորձում գրել, այլ ոչ համոզմունքներս թաքցնելու կամ դրանց պատասխանատվությունից խուսափելու համար: Ինչպես արդեն ասացի, ես դրանք գաղտնի չեմ պահում: Ինչպես Քեռի Թորին* էր ասում. «Դրանք գրված են Ընդհանրական աղոթագրքում**»:

Ակնհայտորեն վտանգն այն էր, որ ես կարող էի որպես ընդհանրական քրիստոնեություն ներկայացնել Անգլիայի

* Քեռի Թորի - Լուդենս Աթերնի «Տրիստամ Չենդի» ստեղծագործության գործող անձանցից է: Երբ նրան հարցնում են ամուսնացած տղամարդու պարտավորությունների մասին, պատասխանում է. «Դրանք գրված են Ընդհանրական աղոթագրքում»: Նկատի ունի, որ դրանք այնքան ակնհայտ են, կարծես «Ընդհանրական աղոթագրքում» գրված լինեն: Լուիսը, խոսելով իր կրոնական համոզմունքների մասին, դրանք նույնքան ակնհայտ և բացահայտ է համարում, որքան եթե գրված լինեին «Ընդհանրական աղոթագրքում»:

** Ընդհանրական աղոթագիրք (Book of Common Prayer) - անգլիկան հաղորդության եկեղեցիների աղոթքների ժողովածուի համառոտ անվանումն է: Գիրքը պարունակում է եկեղեցական օրացույցի բացատրություն և քրիստոնեական տոների նկարագրություններ, ամենօրյա աղոթքների, Սուրբ Պատարագի և այլ խորհրդակատարությունների տեքստեր, ինչպես նաև քրիստոնեական ուսմունքի բացատրություն և այլն: Ամբողջական վերնագիրն է «Գիրք ընդհանրական աղոթքի և խորհուրդների մատակարարության և եկեղեցու այլ արարողությունների ու ծեսերի՝ ըստ Անգլիայի և Իռլանդիայի Միացյալ եկեղեցու ավանդության՝ Դավիթ մարգարեի Սաղմոսներով հանդերձ, ինչպես նաև եպիսկոպոսների, քահանաների ու սարկավազների ձեռնադրության կարգավորության և քահանայագործության ձևն ու եղանակը»:

Եկեղեցին կամ (որ ավելի վատ է) մասնավորապես ինձ ներհատուկ որևէ բան: Դրանից խուսափելու համար Գիորգ Բ-ի ձեռագիրն ուղարկեցի չորս տարբեր հոգևորականների (անգլիկան, երիցական, հռոմեակաթոլիկ, մեթոդիստ)՝ խնդրելով նրանց քննադատական մեկնաբանությունները: Մեթոդիստի կարծիքով՝ ես բավարար չափով չէի խոսել հավատի մասին, կաթոլիկի կարծիքով՝ չափն անցել էի՝ խոսելով քավությունը մեկնաբանելու հարցում տեսությունների համեմատաբար անկարևոր լինելու մասին: Մյուս բոլոր հարցերում հինգս էլ համաձայն էինք: Մնացած գրքերը նույն կերպ չեմ «ստուգել», քանի որ եթե նույնիսկ դրանք քրիստոնյաների միջև տարակարծություններ առաջացնեն, կլինեն ոչ թե հարանվանությունների, այլ անհատների կամ դպրոցների տարբերություններ:

Որքան կարող եմ դատել այդ քննադատական ակնարկներից և ինձ հասցեագրված բազմաթիվ նամակներից, այս գիրքը, որքան էլ որ սխալ լինի այլ առումներով, այնուամենայնիվ, հաջողվել է առնվազն մեկ բանում՝ ընդհանրական քրիստոնեությունը ներկայացնելու հարցում: Այդ իմաստով թերևս այն կարող է որոշակիորեն օգնել հաղթահարել այն տեսակետը, որ եթե մի կողմ թողնենք բոլոր վիճելի հարցերը, ապա մեզ կմնա միայն անորոշ ու կենսագուրկ Սուրբ Քրիստոնեական Հավատը: Իրականում Սուրբ Քրիստոնեական Հավատը ոչ միայն դրական, այլև կատեգորիկ մի բան է՝ բոլոր ոչ քրիստոնեական դավանանքներից բաժանված այնպիսի անդունդով, որը չի կարող համեմատվել քրիստոնեության ներսում պառակտման նույնիսկ ամենալուրջ դեպքերի հետ: Եթե այս գրքով ուղղակիորեն չեմ օգնել վերամիավորման գործին, ապա թերևս ակնհայտ եմ դարձրել, թե ինչու պետք է վերամիավորվենք:

Անշուշտ, ես այլ համայնքների համոզված անդամների կողմից հանդիպել եմ մի փոքր «առասպելական» odium theologicum-ի*։ Թե՛ Անգլիկան եկեղեցու ներսում, թե՛ դրանից դուրս ավելի հաճախ թշնամանք ցուցաբերում են անկայուն մարդիկ, որոնք որևէ համայնքի հստակ հետևորդ չեն։ Սա, ըստ իս, զարմանալիորեն մխիթարական է։ Եկեղեցու ամենախկական որդիները նրա կենտրոնում են, որտեղ յուրաքանչյուր համայնք իրապես ամենից մոտն է որևէ ուրիշին եթե ոչ վարդապետությամբ, ապա հոգով։ Եվ սա ենթադրել է տալիս, որ յուրաքանչյուրի կենտրոնում կա մի բան կամ Մեկը, որ, հակառակ հավատի բոլոր անհամաձայնություններին, խառնվածքային բոլոր տարբերություններին, փոխադարձ հալածանքների բոլոր հիշողություններին, խոսում է միևնույն ձայնով։

Այսքանը վարդապետության հարցերում իմ զանցառությունների մասին։ Գիրք Գ-ում, որը բարոյականության մասին է, նույնպես որոշ բաներ լռությամբ շրջանցել եմ, սակայն այլ պատճառով։ Առաջին համաշխարհային պատերազմում որպես հետևակային ծառայելուց ի վեր խորը հակակրանք ունեի այն մարդկանց նկատմամբ, որոնք, լինելով հարմարավետության և անվտանգության մեջ, կոչեր էին արձակում առաջնագծում գտնվողներին։ Որպես արդյունք, ես դժկամությամբ եմ խոսում այն փորձությունների մասին, որոնց ինքս չեմ ենթարկվել։ Ոչ ոք, կարծում եմ, բոլոր տեսակ մեղքերի փորձություն չի ունենում։ Այնպես է ստացվել, որ իմ նկարագրից դուրս է մնացել այն մղումը, որը տղամարդկանց դարձնում է խաղամուլ,

* Odiium theologicum – լատիներեն արտահայտություն, նշանակում է «աստվածաբանական ատելություն», որով նախկինում քննազրկվել են այն բարկությունն ու ատելությունը, որոնք առաջանում են աստվածաբանական բանավեճերի ընթացքում։

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark 